ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ N 48-Ա
« 28 » ՓԵՏՐՎԱՐԻ 2025Թ.

«ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵԼՓԻՆԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-Ի ՏՆՕՐԵՆ ՍԱՄՎԵԼ ԱԼԱՎԵՐԴՅԱՆԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ԵՎ ԳԱՅԱՆԵ ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ ՏՆՕՐԵՆԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 94-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, 109-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասով, 16-րդ հոդվածի 3-րդ կետի բ) ենթակետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի փետրվարի 9-ի «Պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի պաշտոնի թափուր տեղի մրցույթի հայտարարման, անցկացման, մասնագիտական հանձնաժողովի ձևավորման, գործունեության, տնօրենի նշանակման և բողոքարկման կարգը հաստատելու մասին» թիվ 181-Ն որոշմամբ հաստատված կարգի 4-րդ, 5-րդ, 6-րդ կետերով, հիմք ընդունելով Սամվել Ալավերդյանի հետ կնքած 2021 թվականի հուլիսի 19-ի N457 աշխատանքային պայմանագրի 6-րդ բաժնի 6.1 կետի «դ» ենթակետը և Գայանե Գրիգորյանի դիմումը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. «ՀՀ Վայոց ձորի մարզի Ելփինի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրեն Սամվել Ալավերդյանի լիազորությունները դադարեցնել՝ լուծել նրա հետ կնքած 2021 թվականի հուլիսի 19-ի N457 աշխատանքային պայմանագիրը: Աշխատանքային վերջին օրը համարել 2025 թվականի մարտի 3-ը:
2. Գայանե Գրիգորյանին նշանակել «ՀՀ Վայոց ձորի մարզի Ելփինի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար, մինչև օրենքով սահմանված կարգով թափուր պաշտոնի հիմքի վերացումը: Աշխատանքը սկսել 2025 թվականի մարտի 4-ից:
3. «ՀՀ Վայոց ձորի մարզի Ելփինի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ում հանձնման-ընդունման աշխատանքները կազմակերպելու նպատակով ստեղծել հանձնաժողով՝ համաձայն հավելվածի:
4. Հանձնաժողովի աշխատանքներին մասնակից դարձնել հաստատության նյութական պատասխանատու անձանց:
5. Որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Recoverable Signature

X

Signed by: KOLYA MIKAELYAN 3507670100

Կ. ՄԻՔԱԵԼՅԱՆ

ք. Եղեգնաձոր

Հավելված
ՀՀ Վայոց ձորի մարզպետի
2025թ. փետրվարի 28-ի
N 48 -Ա որոշման

«ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵԼՓԻՆԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-ՈՒՄ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՍՏԵՂԾՎԱԾ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄԸ

Հանձնաժողովի նախագահ՝

Վահան Աբրահամյան	ՀՀ Վայոց ձորի մարզպետի խորհրդական

Անդամներ՝

Հուսիկ Հարությունյան	ՀՀ Վայոց ձորի մարզպետի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության գլխավոր մասնագետ
Գվիտոն Դավթյան	ՀՀ Վայոց ձորի մարզպետի աշխատակազմի ֆինանսական վարչության պետի պաշտոնում փորձագետ